ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԿ
«ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ»/ԳՈՒՄ ՀԿ
PARTNERSHIP & TEACHING NGO
PARTNERSHIP & TEACHING NGO

Հասցե՝ ք. Գորիս, Խորենացու 41,
ք. Երևան, Հերացի 2/ա
Հեռ. 077 23 17 11, 077 23 17 33, 077 23 17 12
E- mail infogumiso@gmail.com,
artashesgum@gmail.com
Web site www.gumiso.am

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ Արայիկ Հարությունյանին

ԴԻՄՈՒՄ

Հարգարժան պրն. Հարությունյան,

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն հայտնում է իր հետաքրքրվածությունը ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ-ին կրթություն և համագործակցություն հանուն քաղաքացիական հասարակության առաքելությամբ, կազմակերպությունը վերագրանցվել է 2008թ. /Պետական գրանցման վկայականի համարը՝ 211.171.04639/:

Կազմակերպությունը մեծ ներդրում ու հարուստ փորձառություն ունի կրթական բարեփոխումների իրականացման գործընթացներում, իր ողջ գործունեության ընթացքում հանդես է եկել կրթական բարեփոխումներին ուղղված բազմաթիվ նախաձեռնություններով, շահերի պաշտպանության տարբեր միջոցառումներով: Կրթությունը կազմակերպության ռազմավարական առաջնային ոլորտն է և շարունակում է մնալ ՀԿ-ի գործունեության կիզակետում:

ԳՈՒՄ ՀԿ-ն ցանկություն է հայտնում ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար և պատրաստ է իր մասնագիտական ներուժն ու փորձառությունը ներդնելու մեր երկրում կրթական ոլորտի բարեփոխումների իրականացման գործընթացներում:

Հարգանքով՝

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ի
գործադիր տնօրեն Արտաշես Տոռոզյան

21.05.2018

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 15139-18
21 05 18

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ռոտացիայի կարգով նոր անդամ ընդգրկելու մասին

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգի» 2-րդ գլխի 8-րդ կետի՝ երկու տարին մեկ անգամ խորհրդի անդամների մեկ երրորդը ենթարկվում է ռոտացիայի: Հետևաբար, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել՝

Հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցներ ներկայացնող կազմակերպություններ, ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ, շահագրգիռ անձինք, որոնց գործունեության բնույթը համընկնում է նախարարության գործունեության հիմնական ուղղություններին, համապատասխան ոլորտում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն (իրականացրել կամ մասնակցել են ոլորտին առնչվող ծրագրերի, փորձագիտական աշխատանքների, ունեն ոլորտին առնչվող հրապարակումներ, մասնակցել են նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի, հանձնաժողովների աշխատանքներին, ոլորտին առնչվող հարցերով համագործակցել են միջազգային կազմակերպությունների հետ և այլն):

Խորհրդի կազմում չեն կարող ընդգրկվել այն անձինք կամ կազմակերպությունները, ովքեր տվյալ պահին ֆինանսավորում են (դրամաշնորհ կամ ծառայությունների մատուցում՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն) ստանում նախարարությունից:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

Դիմում խորհրդի նախագահի անունով.

Տվյալ կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը.

Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.

Մոտիվացիոն նամակ /1.5-2 էջ./ ներկայացնել հիմնավորում հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ.

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ /4-5 էջ/:

Խորհրդում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է այն կազմակերպությանը կամ անձին, որի գործունեությունն առավել սերտ է առնչվում նախարարության նպատակներին և վերջինիս կողմից իրականացվող գործառույթներին, ինչպես նաև խրախուսվում է ազգային փոքրամասնությունների ներգրավվածությունը:

Հայտերը պետք է ներկայացվեն ս.թ. մայիսի 2-ից մինչև մայիսի 25-ը ներառյալ, ժամը 10:00-17:00-ն ՀՀ կրթության և գիտության նախարարության ընդհանուր բաժին: Հավելյալ տեղեկատվության համար զանգահարել՝ 52-73-43 հեռախոսահամարով:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԿ

PARTNERSHIP & TEACHING NGO

«ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ»/ԳՈՒՄ ՀԿ

PARTNERSHIP & TEACHING NGO

Հասցե՝ ք. Գորիս, Խորենացու 41,
ք Երևան, Հերացի 2/ա
Հեռ. 077 23 17 11, 077 23 17 33, 077 23 17 12
E- mail infogumiso@gmail.com, artashesgum@gmail.com
Web site www.gumiso.am

Հետաքրքրվածության նամակ

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն հայտնում է իր հետաքրքրվածությունը ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ-ին կրթություն և համագործակցություն հանուն քաղաքացիական հասարակության առաքելությամբ: Կազմակերպության ռազմավարական նպատակներն ընդհանուր առմամբ բաժանվում են 4 հիմնական ոլորտների՝

- Կրթական բարեփոխումներ
- ՔՀԿ զարգացում
- Համայնքային զարգացում
- Սոցիալական բարեփոխումներ

Կազմակերպությունը մեծ ներդրում ու հարուստ փորձառություն ունի կրթական բարեփոխումների իրականացման գործընթացներում, իր ողջ գործունեության ընթացքում հանդես է եկել կրթական բարեփոխումներին ուղղված բազմաթիվ նախաձեռնություններով, շահերի պաշտպանության տարբեր միջոցառումներով: Կրթությունը կազմակերպության համար ռազմավարական առաջնային ոլորտ է և շարունակում է մնալ ՀԿ-ի գործունեության կիզակետում:

ԳՈՒՄ ՀԿ-ն ցանկություն է հայտնում ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար և պատրաստ է իր մասնագիտական ներուժն ու փորձառությունը ներդնելու մեր երկրում կրթական ոլորտի բարեփոխումների իրականացման գործընթացներում:

Ստորև ամփոփ ներկայացվում են կրթության ոլորտում կազմակերպության ջանքերի շնորհիվ արձանագրված ձեռքբերումները.

- 2002-2004թթ ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից մշակվել և ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի 56 հանրակրթական դպրոցներում փորձարկվել է «Հանրակրթական հաստատությունների աշակերտական խորհրդի» օրինակելի կանոնադրությունը:
- 2004թ. փետրվարի 17-ին ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատվել և հանրակրթական դպրոցներում ներդրվել է ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից մշակված «Հանրակրթական հաստատությունների աշակերտական խորհրդի» օրինակելի կանոնադրությունը:
- 2011թ. ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից վերանայվել և 2011թ. մայիսի 17-ին ՀՀ ԿԳ նախարարի /N-571_Ն/ հրամանով հաստատվել է «Հանրակրթական հաստատությունների աշակերտական խորհրդի» օրինակելի կանոնադրությունը՝ նոր խմբագրմամբ:
- 2008-2009թթ մշակվել են դպրոցների կառավարման մարմինների կանոնադրությունների կիրառման ուղեցույց-ընթացակարգեր՝ կոչված ապահովելու հանրակրթական դպրոցների կառավարման մարմինների ֆինանսական, տնտեսական և ուսումնական գործառույթների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

- 2009թ. հոկտեմբերի 20-ին Կրթության ազգային ինստիտուտի /թիվ Ա-01/438/ որոշմամբ՝ երաշխավորվել է խորհրդատվական մարմինների (մանկավարժական խորհուրդ, ծնողական խարհուրդ, աշակերտական խորհուրդ) կանոնադրությունների կիրառման ուղեցույցների գործողությունը հանրակրթական դպրոցներում: Ուղեցույցը ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից տպագրվել և անվճար բաժանվել են ՀՀ 1400 հանրակրթական դպրոցներին:
- 2009-2012թթ կազմակերպության կողմից մշակվել և ՀՀ հանրակրթական դպրոցներում ներդրվել է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ/ԴԿՏՀ (աշխատանքներն իրականացվել են ՀՀ ԿԳՆ-ի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, Երևանի քաղաքապետարանի և ԳՈՒՄ ՀԿ-ի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում. 30.07.2011): Աշխատանքները հաջողությամբ իրականացվել են և ԴԿՏՀ-ի հետագա շահագործման նպատակով 2012թ. մայիսի 14-ին ՀՀ ԿԳՆ §Կրթական տեխնոլոգիաների կենտրոն!/ԿՏԱԿ ՊՈԱԿ-ի և ԳՈՒՄ ՀԿ-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի համաձայն ԴԿՏՀ-ի տեխնիկական շահագործումը՝ տվյալների շտեմարան, օգտագործման ձեռնարկ և ծրագրային կոդ, փոխանցվել է ԿՏԱԿ-ին:
- 2012թ. կազմակերպությունը ՀՀ ԿԳՆ-ի կողմից ընտրվել է որպես ուսուցիչներ վերապատրաստող որակավորված կազմակերություն:
- 2015թ. մարտի 30-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից մշակված «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը»:
- 2015թ. մարտ-սեպտեմբեր «Այլընտրանքը որպես զարգացման հնարավորություն»-Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան. հանրության լայն շերտերի մասնակցությամբ մշակվել է կրթության զարգացման ռազմավարական ծրագրի(2016 - 2025թթ.) վերաբերյալ առաջարկությունների փաթեթ և ներկայացվել ՀՀ ԿԳՆ-ին:
- 2016 դեկտեմբեր–2017 դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում ԳՈՒՄ ՀԿ-ն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ իրականացրել է ՀՀ Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների մոնիտորիգ: Մոնիտորինգի զեկույցի ամբողջական տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ՝
  http://gumiso.am/monitoring-report-on-education-services/
- ԳՈՒՄ ՀԿ-ի նախաձեռնությամբ ս/թ. փետրվարի 5-ին հիմնադրվել է «Գործընկերություն հանուն կրթության առաջընթացի» կրթական կազմակերպությունների ցանց, որի նպատակն է խթանել կրթական ոլորտում գործող ՔՀԿ-ների դերը՝ որպես կարևոր դերակատարներ կրթական բարեփոխումների վերաբերյալ քաղաքականությունների մշակման և երկխոսության կայացման գործընթացներում: Ցանցում ընգրկված են ոլորտում փորձառու և կարևոր դերակատարում ունեցող հասարակական կազմակերպություններ:

Հարգանքով՝

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ի

գործադիր տնօրեն Արտաշես Տոռոզյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԿ

ԳՈՒՄ

PARTNERSHIP & TEACHING NGO

«ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ»/ԳՈՒՄ ՀԿ

PARTNERSHIP AND TEACHING/P&T NGO

2016-2018թթ

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Գործընկերության և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ
Հասցե՝ ՀՀ, Երևան, Հերացի 2 ա/39; ՀՀ, Գորիս, Խորենացի 41
Հեռ. (+374 77) 23 17 12
Էլ. հասցե՝ info@gum@gmail.com
Վեբ կայք՝ www.gumisd.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....3-4 էջ
- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ .....5 էջ
- ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....6 էջ
- 2016-2018թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ .....7-12 էջ

▲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ-ին կրթություն և համագործակցություն հանուն քաղաքացիական հասարակության առաքելությամբ:

ԳՈՒՄ ՀԿ-ն աջակցում է Հայաստանում քաղաքացիական հասարակության առաջընթացին՝ նպաստելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների(ՔՀԿ), կրթական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների/ՏԻՄ/ և բիզնես հատվածի ընկերությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործընթացներին:

Կազմակերպության ռազմավարական նպատակներն ընդհանուր առմամբ բաժանվում են 4 հիմնական ոլորտների.

Կազմակերպության գործունեության 4 հիմնական ոլորտներն են.

1. Կրթական զարգացում

Ա. Աջակցել ՀՀ-ում կրթական բարեփոխումներին,

Բ. Աջակցել կրթական համակարգի կառավարման ժողովրդավարացմանը,

Գ. Աջակցել կրթական հաստատությունների հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը,

Դ.Նպաստել երեխայակենտրոն մոտեցումների ներդրմանը,

Ե. Աջակցել կրթական հաստատություններում ՏՀՏ և ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրմանը:

2. Համայնքային զարգացում

Ա. Խրախուսել համայնքաբնակների մասնակցության ակտիվացմանը համայնքային խնդիրների բացահայտման և լուծման գործընթացներում,

Բ. Աջակցել համայնքային ոչ ֆորմալ խմբերի ձևավորմանը,

Գ. Նպաստել ՏԻՄ-երի և համայնքային ոչ ֆորմալ խմբերի կարողությունների զարգացմանը.

Դ. Նպաստել ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության և որակի բարձրացմանը:

Ե. Նպաստել ՔՀԿ/ՏԻՄ և բիզնես հատվածների միջև համագործակցության մշակույթի ձևավոնմանը և կառուցողական երխոսության հաստատմանը:

3. ՔՀԿ զարգացում

Ա. Աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների/ՔՀԿ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը,

Բ. Մատուցել համապատասխան ծառայություններ ՔՀԿ-ներին օգնելու նրանց իրականացնելու և հասնելու իրենց ռազմավարական նպատակներին

Գ. Նպաստել համայնքային զարգացմանն ու համայնքային հիմնախնդիրների լուծմանը տեղական և ազգային մակարդակներում.

Դ. Աջակցել ՔՀԿ-ներին հանրային քաղաքականության ոլորտում փոփոխություններ կատարելու գործընթացների իրականացմանը:

4. Սոցիալական բարեփոխումներ

Ա. Նպաստել սոցիալական ոլորտի բարեփոխումների իրականացմանը.
Բ. Նպաստել սոցիալական ոլորտի խնդիրների լուծման գործընթացներում ՔՀԿ-ՏԻՄ-Մասնավոր սեկտոր համագործակցային ցանցի ձևավորմանը.
Գ. Նպաստել ընտանիքների պաշտպանության համագործակցային մոդելների մշակմանն ու ներդրմանը.

2009թ. «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն հավաստագրվել է որպես ծառայություն մատուցող կազմակերպություն Քանունթերփարթ Ինթերնեշնլ/ՔԻ միջազգային կազմակերպության կողմից, որը գնահատել է իր գործընկեր կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացման համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Գնահատումն իրականացվել է Հայաստանում ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ՔԻ-ի մասնագետների կողմից՝ ըստ վեց հիմնական ոլորտների, որոնք ներառում են՝ կազմակերպության կառավարում և ղեկավարում, ֆինանսական կայունություն, արտաքին կապեր, ծառայությունների մատուցում և որակի վերահսկում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, ֆինանսական կառավարում և
դրամաշնորհների ղեկավարում:

❖ ԳՈՒՄ ՀԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ և ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ

ԳՈՒՄ ՀԿ-ի աշխատակազմը բաղկացած է 14 հոգուց՝ ներառյալ պայմանագրային աշխատակիցներ/մարզային և համայնքային համակարգողներ: ՀԿ-ն ունի երկու գրասենյակ՝ Գորիսում և Երևանում:

❖ ԳՈՒՄ ՀԿ-ի գործունեության աշխարհագրությունն ընդգրկում է ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Շիրակի, Արարատի, Կոտայքի մարզերը և Երևան քաղաքը:

ԳՈՒՄ ՀԿ-ի գործունեության մանրամասներին կարող եք ծանոթանալ կազմակերպության պաշտոնական կայքից՝ www.gumiso.am

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԻ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՆ	ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ/ԴՈՆՈՐՆԵՐ
2015	*37 419 340 ՀՀ դրամ*	Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչություն, Վորլդ Վիժն Հայաստան ՄԲԿ, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ/EDRC/
2016 թ.	*90 423 000 ՀՀ դրամ*	«Համաշխարհային բանկ», «Սեյվ Դը Չիլդրեն Ինտերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան ներկայացուցչություն, ԱՄՆ ՄԶԳ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՄՆ ՄԶԳ
2017թ.	*134 571 900 ՀՀ դրամ*	ԱՄՆ ՄԶԳ, «Թրանսնիարենսի ինթերնեշնլ», Էիդիան Արմենիա» ՓԲԸ, «Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիա»/Եվրամիություն, «ԱՀՀ ՔՀԿ-ների կարողությունների հզորացմանը» ծրագիր/ԵՄ

ՀՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- ԱՄՆ ՄԶԳ
- ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն/ ԾԻԳ
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ
- «Վորլդ Վիժն Հայաստան» ՄԲԿ
- «Խաղաղության կորպուսի» հայաստանյան գրասենյակ
- Հայաստանում Ամերիկյան Համալսարան
- Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հայաստանյան գրասենյակ
- ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն
- «Քրոնիմեթ» բարեգործական հիմնադրամ
- «Լիդիան Արմենիա» ընկերություն
- Բրիտանական խորհուրդ
- Իրավաբանների հայկական ասոցիացիա ՀԿ
- Մարդը կարիքի մեջ ՀԿ
- Կանաչ արահետ ՀԿ
- «Հայաստանի մանուկներ» Հիմնադրամ(COAF)
- Մանկական զարգացման հիմնադրամ
- «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» Հիմնադրամ
- Եվրասիա համագործակցության հիմնադրամ
- Թրանսփարենսի ինթերնեշնլ Հայաստան
- «ՍՈՍ մանկական գյուղեր» հիմնադրամ
- «Սիվիլիթաս» հիմնադրամ
- «Սեյվ դը չիլդրեն» ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչություն
- ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն
- ՀՀ-ում Լիտվայի դեսպանատուն
- Գործընկերություն հանուն թափանցիկության ֆոնդ
- ՀԿ կենտրոն
- Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ
- Գորիսի, Կապանի, Սիսիանի Մեղրու կանանց զարգացման ռեսուրս կենտրոններ ՀԿ-երը,
- Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ
- Մարտունու կանանց զարգացման կենտրոն ՀԿ

2016-2018 - ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

❖ ԾՐԱԳԻՐ. «Երիտասարդության գործարար և մասնագիտական հմտությունների բարելավման դասընթացների և նրանց զբաղվածության խթանման մարզային այլ միջոցառումների իրականացում»

Պայմանագրի համարը	YIAP-2.1.1-C
Պատվիրատու կազմակերպությունը	<< Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, << Ֆինանսների նախարարության «Արտաքին ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկ
Ծրագրի իրականացման վայրը	<< 5 մարզ, 30 համայնք;
Ծրագրի տևողությունը	Փետրվար-մարտ, 2016թ.
Պայմանագրի գինը	73 260 990 << դրամ

Նպատակ- Զարգացնել << սահմանամերձ գոտիների/համայնքների խոցելի երիտասարդների կարողությունները, ինչպես նաև ավելացնել նրանց հնարավորությունները՝ նպատակ ունենալով բարելավել վերջիններիս սոցիալ-տնտեսական բարեկեցությունը:

Արդյունքներ

Ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից պատրաստվել է Երիտասարդների գործարար հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումների 10 մոդուլներ:

ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից ծրագրի շահառու << 5 մարզերի (Սյունիք, Վայոց ձոր, Գեղարքունիք, Տավուշ, Շիրակ) 30 համայնքների 120 երիտասարդների համար իրականացվել են «Երիտասարդների գործարար հմտությունների զարգացումե 14 թեմայով դասընթացներ:

Վերոնշյալ 5 մարզում իրականացվել է «Երիտասարդության զբաղվածության ոլորտի հեռանկարներն ու հիմնախնդիրները» թեմայով մարզային համաժողով, «Տեղական աշխատաշուկա. Երիտասարդների հնարավորությունները» թեմայով աշխատանքի տոնավաճառ և «Երիտասարդների հնարավորություններն ու մարտահրավերները տեղական աշխատաշուկայումե թեմայով ֆորում քննարկում:

Պատրաստվել է շահառու 5 մարզերում երիտասարդների զբաղվածության խնդիրներն ու հնարավորությունները ներկայացնող 5 տեսաֆիլմ:

1. Վայոց ձորի մարզի տեսաֆիլմ՝ . https://www.youtube.com/watch?v=Kwc8ZfHm_mE&feature=youtu.be
2. Սյունիքի մարզի տեսաֆիլմ՝ https://www.youtube.com/watch?v=Q9sWv9D4OM8
3. Գեղարքունիքի մարզի տեսանյութ՝ https://mail.google.com/mail/u/0/#search/dvahagn%40yahoo.com/1531856bb0cadff9?projector=1
4. Տավուշի մարզի տեսաֆիլմ՝ https://mail.google.com/mail/u/0/#search/ijevantv%40mail.ru/1531d591e25dab2c?projector=1
5. Գյումրու տեսաֆիլմ՝ http://files.mail.ru/054D6C3F946C4740A9A3EFCC7C02D9C3

❖ ԾՐԱԳԻՐ. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Ղոնոր կազմակերպությունը	«Լիդիան Արմենիա» ընկերություն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Վայոց ձորի մարզի Ձերմուկ, Գնդեվազ, Սարավան և Սյունիքի մարզի Գորիայք համայնքներ
Ծրագրի տևողությունը	2017թ. մարտ-2018թ. հունվար
Դրամաշնորհի չափը	13 880 200 ՀՀ դրամ

➢ Ծրագրի նպատակը -«Սոցիալական ձեռնարկատիրության զարգացում» ծրագիրն ուղղված էր փորձարկել և նպաստել սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը՝ որպես համայնքի սոցիալապես խոցելի և այլ անդամների բարեկեցության ապահովման միջոց:

➢ Ծրագրի շահառուները -Ձերմուկ, Գնդեվազ, Սարավան և Գորիայք համայնքների ֆերմերներ, ջերմոցների սեփականատերերն են և ձեռագործ աշխատանքների ուսուցում անցած աղջիկների և կանանց խումբ:

➢ Արդյունքներ

Ծրագրի իրականացման արդյունքում հիմնվել են երկու սոցիալական ձեռնարկություններ՝

❖ «Առատ զամբյուղ» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվ
❖ «Ապագայի շողեր» հասարակական կազմակերպություն և «Ձերմուկ հանդիքրաֆթս» սոցիալական ձեռնարկություն

2017 թվականի ընթացքում Սոցիալական ձեռնարկատիրության զարգացում ծրագրի շրջանակներում ստեղծված 2 ՍՁ-ները մասնակցել են թվով 5 ցուցահանդես վաճառքների՝ Ձերմուկում, Արենի, Տաթև և Երևան քաղաքներում: Ցուցահանդես վաճառքների արդյունքում գեներեցված շահույթը՝ մոտ 500.000 դրամ, ամբողջությամբ ուղղվել համայնքային հիմնախնդիրների կարգավորմանը:

❖ ԾՐԱԳԻՐ. «ՀԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐ

Պայմանագրի համարը	AID-111-A-17-00003
Դոնոր կազմակերպությունը	ՄԱՆ ՄԶԳ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ 7 նարգեր/Սյունիք, Վայոց Ձոր, Գեղարքունիք, Կոտայք, Արագածոտն, Արմավիր և Արարատ
Ծրագրի տևողությունը	2016թ. նոյեմբեր -2017թ. նոյեմբեր
Գրանտաշնորհի չափը	72745 000 ՀՀ դրամ/ 149 983 ԱՄՆ դոլար

- Ծրագրի նպատակը -Հզորացնել տարածաշրջանային քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ կազմակերպչական կարողությունների, կայունության և հաջող համագործակցության նպատակով՝ ծրագրի թիրախային մարզերի քաղաքացիական հասարակության, պետական և մասնավոր հատվածի ինստիտուտների միջև միջոլորտային երկխոսության խթանման միջոցով:
-
- Ծրագրի շահառուները -ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերի ՔՀԿ/ՏԻՄ և բիզնես հատվածի ներկայացուցիչներ.
- Արդյունքներ
- ՔՀԿ-ները թիրախ մարզերում դարձել են ուժեղ և կայուն կառույցներ ծառայությունների մատուցման, մարդկային ռեսուրսների կառավարման, կազմակերպական կարողությունների զարգացման, ֆինանսական կայունության և հանրային կապերի ոլորտներում:
- Թիրախ մարզերում ձևավորված ՔՀԿ համախմբման կենտրոնները իրականացնում են տարաբնույթ նախաձեռնություններ, տրամադրում են ՔՀԿ կարողությունների զարգացման ծառայություններ:
- ՔՀԿ-երը ձևավորել են արդյունավետ համագործակցություն և երկխոսություն ՏԻՄ-պետական-մասնավոր հատվածի կառույցների միջև՝ ուղղված համայնքային հիմնախնդիրների լուծմանը:
- ՔՀԿ-ՏԻՄ և բիզնես հատվածի կառույցների համագործակցությամբ թիրախ մարզերում իրականացվել են համայնքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված 7 նախաձեռնություններ: Իրականացված ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմել է շուրջ 15.000.000 ՀՀ դրամ, որից ավելի քան 50% կազմել են տեղական ներդրումները:

❖ ԾՐԱԳԻՐ. «Շահագրգիռ կողմերը ընտանիքի պաշտպանության դերակատարներ»

Պայմանագրի համարը	625-04-SGP
Դոնոր կազմակերպությունը	
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս և Սիսիան համայնքներ
Ծրագրի տևողությունը	Հունիս 2017-Մարտ 2018
Դրամաշնորհի չափը	46 465 EUR

Ծրագրի նպատակը-Նպաստել Սյունիքի մարզի Գորիս և Սիսիան համայնքներում սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների գործընթացների իրականացմանը՝ ընտանեկան աջակցության համագործակցային մոդելի ներդրմամբ և այդ գործընթացներում ՔՀԿ-ների և սոցիալական աշխատողների դերի բարձրացմամբ:

Արդյունքներ

- Ձևավորվել է համագործակցության հարթակ Գորիսում և Սիսիանում գործունեություն ծավալող և ծրագրի թիրախ 15 ՀԿ-ների և Գորիսի ու Սիսիանի համայնքապետարանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, ՍԱՏԳ-ների, Զբաղվածության տարածքային գործակալությունների Գորիսի և Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների միջև:

- Զարգացել են ծրագրի թիրախ ՀԿ-ների կարողությունները սոցիալական ոլորտում ծառայությունների մատուցման ուղղությամբ */իրականացվել են 10 թեմայով դասընթացներ և խորհրդատվություններ թվով 15 ՀԿ-ների, 15 համայնքային սոցիալական աշխատողների համար/:*

- Գորիսի և Սիսիանի ՍԱՏԳ-ների համագործակցությամբ բացահայտվել են ծրագրի շահառու 22 ընտանիքները, գնահատվել նրանց կարիքները, կազմվել անհատական սոցիալական ծրագրերը:
- Մշակվել և թիրախ համայնքներում փորձարկվում է Սոցիալական համագործակցության տարածքային մոդելի կիրառման ուղեցույց
- Սոցիալական համագործակցության մոդելի շրջանակներում համալիր ծառայություններ են տրամադրվում թիրախ ընտանիքներին/ՔՀԿ ցանցի անդամ 6 կազմակերպություններ համագործակցային մոդելի շրջանակներում ծառայություններ են մատուցում թիրախ ընտանիքներին/իրավաբանական, կրթական, սոցիալական, տնտեսական/
- Իրականացվել է ցանցային ֆոնդահայթայթում ընտանիքների համար տնտեսական կայունություն ապահովելու նպատակով
- Գորիս և Սիսիան համայնքներում գործունեություն ծավալող 19 ՀԿ-ներ միացել են տարածքային մակարդակում ձևավորված Սոցիալական համագործակցության համաձայնագրին

❖ ԾՐԱԳԻՐ. «Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը որպես կրթության բարելավման երաշխիք»

Պայմանագրի համարը	N2016/7
Դոնոր կազմակերպությունը	Թրանսպարենսի Ինթերնեշնլ
Ծրագրի իրականացման գոտին	ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս, Սիսիան, Կապան
Ծրագրի տևողությունը	Դեկտեմբեր 2016- Հոկտեմբեր 2017
Դրամաշնորհի չափը	4 750 000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը - Բարձրացնել Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և արդյունավետությունը՝ բարելավելով թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները մասնակցային մոնիտորինգի, սոցիալական հաշվետվողականության և ջատագովությանն ուղղված քարոզարշավների միջոցով:

Շահառուները- ՀՀ Սյունիքի մարզի 12 ներառական դպրոցների աշակերտներ, ծնողներ

Արդյունքներ

- ✓ Բացահայտվել է Սյունիքի մարզի ներառական հանրակրթական դպրոցների կողմից մատուցվող համապատասխան ծառայություններում առկա թերացումները, թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների անկատարությունը, կոռուպցիոն ռիսկերը, դրանց պատճառներն ու հետևանքները:
- ✓ Բարձրացել է շահառուների և շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը ներառական հանրակրթական դպրոցների կողմից մատուցվող համապատասխան ծառայությունների առկա իրավիճակի վերաբերյալ:
- ✓ Ձևավորվել է համագործակցություն շահագրգիռ կողմերի միջև և մշակվել է ներառական հանրակրթական դպրոցների կողմից մատուցվող համապատասխան ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացմանն, ինչպես նաև թափանցիկության և հաշվետվողականության գործընթացների բարելավմանն ուղղված բարեփոխումների առաջարկ-փաթեթ:

- ✓ Իրականացրել է ՀՀ Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների մոնիտորիգ: Մոնիտորինգի զեկույցի ամբողջական տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://drive.google.com/.../1bzO_BEaLCvkLyS17teOQaF7chR.../view

❖ ԾՐԱԳԻՐ.Երիտասարդները որպես համայնքային փոփոխությունների դերակատարներ

Պայմանագրի համարը	SGS/SGC-020-13
Դոնոր կազմակերպությունը	Եվրոպական միություն
Իրականացման վայրը	ՀՀ, Սյունիքի և Արարատի մարզեր, Գորիս և Ուրցաձոր համայնքներ
Իրականացման ժամանակահատվածը	1 Հոկտեմբեր, 2017 - 30 Սեպտեմբեր, 2018
Բյուջեն	64 771 Եվրո

✓ Նպատակ-Ծրագրի նպատակն է զարգացնել Ուրցաձորի և Գորիսի խոշորացված համայնքների երիտասարդների կարողությունները՝ բարձրացնելով նրանց դերը համայնքային զարգացման գործընթացում:

Սկսնակվող արդյունքներ

- Համայնքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված գաղափարներ Գորիսի և Ուրցաձորի խոշորացված համայնքներում,
- Համայնքի համախմբման, ծրագրի նախագծման, ֆոնդահայթհայթման և կամավորական կարողությունների զարգացում,
- Գորիս և Ուրցաձոր համայնքների համախմբման երիտասարդական կենտրոնների հիմնում:

Կոնտակտային տվյալներ
Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ
ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հերացի 2 ա/39
ՀՀ, ք. Գորիս, Խորենացի 41
Հեռ.՝ (+374 77) 23 17 12
Էլ. հասցե՝ infogum@gmail.com
Վեբ կայք՝ http://www.gumiso.am

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Կրթությունը Հայաստանում դիտվում է գերակա ոլորտ երկրի կայուն զարգացման համար: Հայաստանում կրթության ոլորտի բարեփոխումները սկսել են իրականացվել ՀՀ անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Այն ավելի համակարգված և հեռանկարային բնույթ ստացավ, երբ ընդունվեց «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որտեղ մասնավորապես ամրագրվեց, որ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: Դրան հաջորդեց 2001թ-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ,,ՀՀ կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիր,, ՀՀ օրենքի ընդունումը: 2006-2010թթ ՀՀ-ում կրթությունը մեղմ ասած՝ «մնաց առանց ռազմավարության», սակայն իրավիճակը նորից փոխվեց 2011-ին, երբ նորից ԱԺ-ի կողմից ընդունվեց «ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր» ՀՀ օրենքը, որի հիմքում դրվեցին ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև ԱՄՆ ՄԶԳ-ի օժանդակությամբ մշակված «Կրթություն-2015» զարգացման հայեցակարգը: Մեր կողմից կատարված նախնական ուսումնասիրությունները՝ կապված ՀՀ-ում կրթության ռազմավարության մշակման, իրականացման, արդյունքների գնահատման հետ, ցույց տվեցին, որ այն դեռևս հեռու է հանրության կարիքների վրա հիմնված լինելուց, հանրային լայն մասնակցություն ապահովելուց և վերահսկման ու գնահատման գործընթացներում ՔՀԿ-երի և լայն հանրության ներգրավածությունը ապահովելուց: ՀՀ ԿԳՆ-ն չի ներկայացրել կրթության առաջընթացի և հիմնախնդիրների վերաբերյալ տարեկան հանրային զեկույցներ:

ՀՀ Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի համաձայն՝ նախատեսվում էր բարելավել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Սակայն ներկայիս ցուցանիշներն արձանագրում են հետընթաց միջազգային չափանիշներից:

Չնայած այն իրողությանը, որ 2011-2015թթ ծրագրում նշվում է. «Ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների վերաբերյալ կիրապարակվեն տարեկան հաշվետվություններ, իսկ Ծրագրի գնահատումը կիրականացվի 2 շրջափուլով՝ միջանկյալ (2013թ.) և ամփոփիչ (2015թ. »*):-(ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր, 116 կետ):* Նույն ծրագրի 94-րդ կետում նշվում է. Միաժամանակ, կընդլայնվեն քաղաքացիական հասարակության, գործարար համայնքի, ինչպես նաև կրթության համակարգի յուրաքանչյուր ներկայացուցչի մասնակցության հնարավորությունները կրթության կառավարման և ծրագրերի իրականացման ոլորտներում: Այդ նպատակով կմշակվի և կիրականացվի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաղորդակցության ռազմավարությունը, որը միտված կլինի համակարգի գործունեության թափանցիկությանը, հասարակական երկխոսության կայացմանը, որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը և իրականացվող ծրագրերի նկատմամբ հասարակության լայն շերտերի վստահության բարձրացման:

2015 թվականին սկսվեց «Կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի» մշակման աշխատանքները: Նախարարությունը հայտարարեց, որ նախատեսվում է ունենալ 10-ամյա ծրագիր՝ 2016-2025 թվականների համար: Նախագծի մշակումն իրականացվեց ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ: Սակայն ծրագիրը ընդունումը հետաձգվեց ԿԳ նախարարի և վարչապետի փոփոխության արդյունքում:

2017թ. ԿԳ նախարարությունը հրապարակեց նոր ծրագիր, որը նախատեսված է մինչև 2030 թվականն ընկած ժամանակաշրջանի համար: Առաջին անգամ ծրագիրն ունի նաև անուն՝ «Կրթություն, որը մեզ պետք է»: Ներկայումս շրջանառվում է «ՀՀ կրթությունը մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքի նախագիծը https://www.e-draft.am/files/project_file/1/15101294727046.doc :

Հատկանշական է, որ Կրթության ոլորտում կարևորվում են կարիքից բխող պլանավորումը, սոցիալական երկխոսությունը, գործընկերային համագործակցությունը, ինչպես նաև սահմանվել է ռազմավարական ուղղություններ, որոնք մեր կարծիքով բավարար չեն կրթության ոլորտում ամբողջական առաջընթաց արձանագրելու համար:

Ծրագրում առկա են բազմաթիվ խնդիրներ: Մասնավորապես, ծրագրում ընդհանրապես ներկայացված չէ, թե այսօր ինչ իրավիճակ ունենք կրթության ոլորտում: Բացակայում է նախարդ ծրագրի վերաբերյալ գնահատականները, արձանագրած արդյունքները և բացթողումները:

Ստորև ընդհանրացված ձևով ներկայացված է հանրակրթության ոլորտում մեր կողմից բացահայտված հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկները:

● Կառավարում

Հիմնախնդիր - Հանրակրթական հաստատությունների կառավարման խորհուրդների գործունեությունը անարդյունավետ է և հիմնականում կրում է ձևական բնույթ.

Հիմնախնդրի հիմնավորումը

Դպրոցական խորհուրդների(ԴԽ) ստեղծման ամենագլխավոր պատճառներից մեկը հանրակրթական հաստատությունների կառավարումը տեղական դպրոցական խորհուրդների միջոցով կազմակերպելու անհրաժեշտությունն էր, ապահովելու հասարակության շահագրգիռ կողմերի մասնակցությունը և զարգացնելու դպրոցի ժողովրդավարական կառավարման կազմակերպումը՝ ներառելով ուսուցիչներին, ծնողներին, համայնքի անդամներին և ակնկալելով իրենց ավելի ակտիվ մասնակցություն դպրոցի կառավարման գործընթացին:

Դպրոցական խորհուրդների ձևավորումն անշուշտ նպաստել է կրթության կառավարման ժողովրդավարացմանը, սակայն որոշ դեպքերում խորհուրդները դրսևորում են ոչ արդյունավետ և թափանցիկ գործելաոճ: Դանդաղ է ընթանում հասարակությանը կրթության կառավարմանը մասնակից դարձնելու գործընթացը: Խորհուրդներն ակտիվ են հատկապես տնօրենի ընտրության ժամանակ, մինչդեռ դրանից դուրս մատնված են անգործության կամ հանդիսանում են տնօրենի կամակատարը: Տարիներով նիստեր չեն

գումարվում, իսկ նիստերի արձանագրությունները «պարտաճանաչ» պատրաստվում են տնօրինության կողմից և վավերացվում:

Լուծման առաջարկներ

- Վերանայել դպրոցի կառավարման խորհրդի կանոնադրությունը՝ այն օժտելով իրական լիազորություններով:
- Օրենքով սահմանափակել մարզպետների ազդեցությունը դպրոցների տնօրենների ընտրության և նշանակման գործընթացներում: Խորհրդի անվանական ցանկի հաստատման լիազորությունը փոխանցել ՀՀ ԿԳՆ-ին:
- ԴԽ-ում Երևանում և մարզերում տարածքային կառավարման մարմնի ներկայացուցիչների համար սահմանել մեկական ներկայացուցիչ:
- Միասնականացնել և ձևայնացնել խորհրդի գործունեության ընթացակարգերը (գործավարություն, օրինակելի ձևերի մշակում համատարած տարածում, խորհրդի անդամների անձնական փաստաթղթերի փաթեթի ստեղծում):
- Մշակել և ներդնել դպրոցի կառավարման խորհրդի անդամների խրախուսման համակարգ.

Հիմնախնդիր – Հանրակրթական հաստատությունների խորհրդակցական մարմինները, հատկապես ծնողական և աշակերտական խորհուրդները թույլ են ներգրավված հաստատության կառավարմանը և թույլ է ազդեցությունը հաստատության մակարդակում որոշումների կայացման գործընթացներում:

Հիմնախնդրի հիմնավորում

Ծնողական խորհրդի մասով - Ծնողական խորհուրդներն հիմնականում անգործության են մատնված եւ զարգացման կարիք ունեն: Դպրոցներում չկան առանձին աշխատասենյակներ եւ չկա աշխատանքների մեթոդական ու կազմակերպչական համակարգում: Հակառակ դպրոցների կառավարման գործում ծնողների եւ նրանց խորհուրդների գործունեությունը խթանելու ՀՀ կառավարության եւ ԿԳՆ-ի կողմից կարևորվածությանն ու հրահանգավորումներին, դեռեւս արդյունավետություն չի նկատվում: Արդեն վաղուց ծնողների մոտ արմատավորվել է անգործունյա համաձայնության կեցվածք: Ծնողական խորհուրդը բավարար չի մասնակցում դպրոցի կառավարմանը, նաեւ՝ դաստիարակչական աշխատանքներին, իսկ դաստիարակության գծով փոխտնօրեններն ու դասղեկները թելադրող կամ հսկող դեր են կատարում: Դպրոցներում եթե կան էլ ծնողական խորհուրդներ, ապա դրանք գործում են դպրոցի վարչակազմի հայեցողությամբ: Դպրոցներում իրական աշխատանքներ չեն տարվում դպրոցի կառավարման գործընթացում ծնողներին ներգրավելու ողղությամբ: Այս բոլորի հետևանքով ծնողները աստիճանաբար հեռանում են դպրոցից և չեն տեսնում իրենց դերակատարումը դպրոցի կյանքում: Այս գործընթացը տեղի է ունենում մի կողմից դպրոցի տնօրինության կողմից ծնողների հանդեպ վարվող «դպրոցի գործերին չափավոր մասնակցության» քաղաքականության, մյուս կողմից դպրոցի կառավարման գործընթացներին ծնողների մասնակցության գործնական կարողությունների բացակայության պատճառներով:

Աշակերտական խորհրդի մասով – 2004թ. ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատվեց և հանրակրթական հաստատություններում կիրառության դրվեց «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության

աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը: Անցած 10 տարիների ընթացքում տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպությունների կողմից, ՀՀ ԿԳՆ-ի հետ համագործակցությամբ, իրականացվել են բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված աշակերտական խորհուրդների կայացմանն ու դպրոցական կյանքում աշակերտների իրական դերակատարության բարձրացմանը: Ակնհայտորեն արձանագրվել են մեծ հաջողություններ այն դպրոցներում, որտեղ ձևավորվել են աշակերտական խորհուրդների գործունեության կազմակերպման մշակույթ: Այդ հաստատություններում իրականացվում է գործընթաց, որտեղ ներգրավված են ոչ միայն աշակերտները, այլև տնօրինությունը, ուսուցիչները, ծնողները, ՔՀԿ-երը և այլ շահագրգիռ կողմեր: Ցավոք, այդ կարքի հաստատությունների թիվը չի գերազանցում հանրակրթական հաստատությունների 15-ից 20%-ը: Շարունակվում են հաստատությունների մեծ մասում ձևական բնույթ կրել աշակերտական խորհուրդները. Ընտրությունները չեն կայանում կամ կրում ձևական բնույթ, աշակերտները չունեն բավարար կարողություններ ինքնակազմակերպվելու և գործունեություն իրականացնելու: Այս ամենի արդյունքում, բնականաբար, անկում է ապրում նաև աշակերտության հետաքրքրությունը աշակերտական խորհրդի գոյության վերաբերյալ: Դպրոցների գերակշռող մեծամասնությունում բացակայում են աշակերտական խորհուրդների սենյակները. ԱԽ-երը չունեն մինիմալ պայմաններ իրենց աշխատանքները կազմակերպելու համար: Ցածր մակարդակի վրա է մնում աշակերտական խորհուրդների միջդպրոցական համագործակցությունը, չնայած վերջին երեք տարիներին արձանագրվել է ԱԽ-երի երեք մարզային ցանցերի ստեղծում և ակտիվ գործունեություն՝ Վորլդ Վիժն և Գործընկերություն և ուսուցում/ԳՈՒՄ կազմակերպությունների ներդրած ջանքերով:

Լուծման առաջարկներ

- ԿԳՆ-ի կողմից պատշաճ վերահսկողություն իրականացնել հաստատություններում ծնողական և աշակերտական խորհուրդների գործունեության կազմակերպման աշխատանքներին:
- Պատրաստել «Ծնողական և աշակերտական խորհուրդների գործունեության ակտիվացմանն ուղղված մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ և իրականացնել հաստատությունների մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրենների և/կամ կազմակերպիչների վերապատրաստումներ:
- Կազմակերպել ԱԽ, ԾԽ մարզային կոնֆերանսներ և փորձի փոխանակման հանդիպումներ:
- Աջակցել Ծնողական և աշակերտական խորհուրդների մարզային և հանրապետական ցանցերի ձևավորման և ինտրտուցիոնալացման աշխատանքներին:
- Կազմակերպել «Տարվա լավագույն ԱԽ,ԾԽ» մրցանակաբաշխություն

Ֆինանսավորում

Հիմնախնդիր - հանարակրթական հաստատությունների տարեկան ֆինանսավորման մեկ տողով բանաձևային հիմքով եղանակի մեխանիզմները չեն ապահովում հանրակրթական դպրոցների բնականոն կենսապահովումը և զարգացումը:

Հիմնախնդրի հիմնավորում

- Հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի առյուծի բաժինը կազմում է մանկավարժական և ուսումնական հաստատության այլ աշխատողների (սպասարկող աշխատակազմ) աշխատավարձի ֆոնդը:
- Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսական կառավարման մոդելը, որը պետք է իրականացվի <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համաձայն, զգալի թերություններ է արձանագրում՝ կապված հանրակրթական հաստատության ֆինանսական միջոցների ձևավորման և ծախսման երկկողմանի՝ հաստատության տնօրինության և մարզային կրթության ոլորտի ֆինանսական կառավարման պատասխանատու օղակների միջամտությունների պատճառով:
- Ժողովրդագրական գործընթացներով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակի կտրուկ և շարունակական նվազման գործընթացը անուղղակիորեն դարձել է աշակերտ թվից կախված վերոնշյալ ֆինանսավորման եղանակի կատարելագործման գործոն: Այս փաստը նկատելի է հատկապես գյուղական համայնքներում: Ստեղծված իրավիճակում տնօրենները ստիպված են նվազագույնի հասցնել էլեկտրականության ու ջեռուցման ծախսերը: Դպրոցի բյուջեն աշակերտների թվի հետ կապելը վիճահարույց է: Որոշ դպրոցներ առավել լավ են աշխատում որպեսզի գրավեն աշակերտներին, բարելավեն իրենց ֆինանսական վիճակը, մինչդեռ որոշ դպրոցներ էլ, որ չեն հաջողում այս գործում, լուրջ խնդիրների են բախվում սեփական գործառնությունների համար անհրաժեշտ մինիմալ ծախսերը հոգալու հարցում: Այս խնդիրը հատկապես զգալի է առավել ցայտուն ժողովրդագրական անկում ունեցող տարածքներում:
- Վերջին տասնամյակում պետության կողմից զգալի թվով ուսումնական հաստատություններ հիմնանորոգվել են, որը հանգեցրել է հանրակրթական ուսումնական հաստատության պահպանման ծախսերի կրճատման: Սակայն վերջինիս ազդեցությունը հանրակրթական ուսումնական հաստատության ֆինանսական կառավարման արդյունավետության վրա աննշան է:
- Գյուղական փոքր դպրոցներում բազմահամակազմ դասարանների առկայությունը կրթության որակի ապահովման և հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համակողմանի կատարման անհաղթահարելի օբյեկտիվ դժվարություններ են ստեղծում:
- Հանրակրթական դպրոցների ընթացիկ ծախսերում ավելի քան 95%-ը կազմում են աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերը կամ՝ ոչ աշխատավարձային ծախսերին մնում է շուրջ 5%-ը: («Հանրակրթական դպրոցների ֆինանսական կառավարման արդի խնդիրները» http://www.gumiso.am/up/freepage/fileArm65.pdf)
- Դպրոցները ֆինանսական պայքարի մեջ են, և որպեսզի հնարավոր լինի ապահովել այն ամենը ինչ պահանջվում է, հաճախ բեռը գցելով ծնողների ուսերին: Ներկայիս դպրոցների աշակերտի թվով ֆինանսավորման համակարգը (որոշակի փոփոխական գործակիցների առկայությամբ) փոքր դպրոցների համար հանգեցնում է ծանր խնդիրների, անտեսելով միջազգային փորձը որը քարոզում է մասնավորապես ուշադրություն և աջակցություն տրամադրել փոքր դպրոցներին, լավ կրթություն ապահովելու համար (տե՛ս

օրինակ Herbert J. Walberg, 2010): Փոխարենը, գործող աշակերտների թվի հիման վրա ֆինանսական համակարգը խրախուսում է դպրոցներին պայքարել աշակերտների համար դպրոցական բյուջեն ավելացնելու նպատակով («Դպրոցական Կրթության Հասանելիությունը Հայաստանում Հետազոտական ուսումնասիրություն» – 2012,Երևան http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Acccess-to-School-Education-Report_Armenian.pdf.

❖ Լուծման առաջարկներ

- Մշակել և ներդնել հանրակրթական ուսումնական հաստատության կարիքների գնահատման հիման վրա ֆինանսավորման նոր մոդել, որի կիրառման համար անհրաժեշտ է իրականացնել դպրոցների ամենամյա կարիքների գնահատում: Դրա արդյունքում հաստատությունները կարելի է բաժանել երկու խմբի՝
  ա) բավարար հիմնանորոգված և գույքով ապահովված դպրոցներ,
  բ) հիմնանորոգման և գույքի կարիք ունեցող դպրոցներ:
  1-ին խմբի դպրոցների համար ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևում ներմուծել լրացուցիչ գործակիցներ և դպրոցներին հատկացնել որոշակի միջոցներ՝ կապիտալ ծախսեր կատարելու համար (կարող է հաշվարկի հիմքում դրվել գույքի մաշվածության արժեքը): Ընդ որում, նպատակահարմար է կառավարության կողմից առանձին կարգ սահմանել նշված միջոցների օգտագործման համար և այլևս կենտրոնացված կարգով կապիտալ հատկացումներ չկատարել տվյալ դպրոցներին:
  2-րդ խմբի դպրոցներում շարունակել կապիտալ ներդրումների ներկայիս ձևը, ըստ որում յուրաքանչյուր դպրոցի վերանորոգման և գույքով ապահովման աշխատանքներն ավարտելուց հետո՝ այն տեղափոխել 1-ին խումբ:
  Կրթության գործընթացի բնականոն կազմակերպման, կրթության որակին միտված ֆինանսավորման արդյունավետ կառուցակարգերի սահմանման համար հասունացել է բազմահամակազմ դասարանի ձևավորման և ուսումնական գործընթացի կազմակերպման համապատասխան կարգի մշակումը:
- Իրականացնել ուսումնական հաստատությունների բանաձևային հիմքով տարբերակված ֆինանսավորում՝ հաշվի առնելով հետևյալ չափորոշիչները.
  ա/ Ուսումնական հաստատությունում սովորողների թվաքանակ,
  բ/ Ուսումնական հաստատության շենքային պայմանների ֆիզիկական վիճակի գնահատման,
  գ/ <<Դպրոցի պահպանման ծախս>>/C-ի/ հասկացության բովանդակության փոփոխություն և համապատասխանեցում դրա հիման վրա իրականացվող ֆինանսական գործընթացներին:
  դ/ Ըստ կրթական ծրագրերի աստիճանների իրականացվող հանրակրթական հիմնական
  ծրագրերի տարբերակված ֆինանսավորման գործակիցների կիրառում:
- Մշակել և ներդնել օրենսդրական մեխանիզմ (<< կառավարության որոշում), համաձայն որի ուսումնական հաստատության աշխատավարձային ծախսերի կուղղվի հաստատության բյուջեի մինչև 80%-ը՝ մնացած գումարի շրջանակներում

հաստատության հնարավորություն տալով իրականացնելու զարգացմանն ուղղված անհրաժեշտ այլ ծախսեր:

Հիմնախնդիր - հանրակրթական հաստատություններին հատկացված ֆինանսական միջոցների վերահսկողությունը պատշաճ մակարդակով չի իրականացվում:

Հիմնախնդրի հիմնավորում

<< հանրակրթական հաստատությունների բուջեների ձևավորման պլանավորման և բյուջեի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ հասանելի չէ հանրակրթության ոլորտի կրթական ծառայությունների ստացողների համար, որը բացասաբար է անդրադառնում վստահության մթնոլորտի ձևավորման և ծնող-դպրոց արդյունավետ համագործակցության վրա:

Լուծման առաջարկներ

- Աջակցել ուսումնական հաստատություններին (մեթոդական ուղեցույցի մշակում, շահագրգիռ կողմերի վերապատրաստում)՝ ներդնելու «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը»:
- Բարձրացնել շահագրգիռ կողմերի՝ ծնողների, ՔՀԿ-երի, համայնքի անդամների դերն ու մասնակցությունը հաստատությունների ֆինանսական միջոցների վերահսկողության գործընթացներում:

Հիմնախնդիր - Ուսուցիչների ցածր վարձատրություն

- **Հիմնախնդրի հիմնավորում** - Մանկավարժական աշխատողների աշխատաժամանակի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանող իրավական ակտերից ակնհայտ է դառնում, որ հատկապես ուսուցիչների աշխատավարձը բացառապես ձևավորվում է նրանց կողմից փաստացի դասավանդած դասաժամերի քանակի հաշվառմամբ: Ուսուցչի աշխատավարձի ձևավորման նման մեխանիզմը հանգեցնում է սեփական աշխատանքի մոտիվացիայի անկման: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ աշակերտների թիվը տարեցտարի նվազում է և դրա արդյունքում ուսուցիչների ծանրաբեռնվածությունը իջնում, ապա ակնհայտ է դառնում հիմնախնդրի արդիականությունը: Այս իրողության արդյունքում՝
  - հանրակրթական հաստատությունների մեծ մասում, մասնավորապես մարզերում, մեծ թիվ են կազմում թերծանրաբեռնված ուսուցիչները, որոնք կատարում են ոչ լիարժեք աշխատանքը և ունեն ցածր մոտիվացիա:
  - տղամարդ ուսուցիչների թիվը շարունակում է նվազել (իգական սեռի ուսուցիչները կազմում են Երևանում ընդհանուր ուսուցիչների թվի 89%-ը, իսկ մարզերում՝ 82%-ը)

Լուծման առաջարկներ

- Վերանայել ուսուցիչների վարձատրման կարգն ու աշխատավարձերը. Չեղավորել օրենսդրական մակարդակով ուսուցչի աշխատանքի վարձատրության կայուն մեխանիզմներ՝ուսուցչի պաշտոնը ամրագրելով որպես հաստիքային աշխատանք: ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ ամրագրված շաբաթական 40-ժամյա աշխատանքային ծավալի նորմավորման սկզբունքի հիման վրա, այդ հաստիքում ներառելով նաև ուսուցչի շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը:
- Համապատասխանեցնել ուսուցչի իրականում կատարած աշխատանքն ու վարձատրությունը:
- Մշակել դպրոցներում տղամարդ ուսուցիչների ներգրավման արդյունավետ մեխանիզմներ:

Կադրային քաղաքականություն

Հիմնախնդիր - Ուսուցիչների ընդունելության կարգը կրում է ձևական բնույթ և կոռուպացված է.

Հիմնախնդրի հիմնավորում - ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի հրամանով հաստատվեց «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը, որը միտված էր կանոնակարգելու ուսուցիչների ընտրության գործընթացը, այն դարձնելու մրցակցային և թափանցիկ: Բոլոր մարզերի և Երևանի ֆորումների մասնակիցները միակարծիք էին, որ ուսուցիչների թափուր տեղի համար անցկացվող մրցույթները ձևական բնույթ է կրում և ընտրում են այն թեկանածուները, որոնք արդեն ստվերային պայմաններում «ընտրվել են»: Իրողություն է, որ հիմա արդեն բաց մրցույթ է հայտարարվում, բայց միևնույն է, ստվերային պայմանավորվածության մեխանիզմը գործում է: Դարձյալ տնօրենին կամ մարզպետին կաշառք են տալիս կամ միջնորդում են: Կարծես արտաքուստ՝ ամեն ինչ օրինական է, բայց խորքում գործընթացը ստվերային է և կոռումպացված:

Լուծման առաջարկներ

- Ուսուցիչների ընդունելության գործընթացում բացառել դպրոցի մասնակցությունը/տնօրեն, ուսուցիչներ/, խուսափելու համար հնարավոր շահերի բախումից և կոռուպցիոն ռիսկերից:
- Ուսուցիչների թափուր տեղի համար անցկացվող մրցույթները անցկացնելու համար ստեղծել անկախ հանձնախումբ կամ աշխատանքային խումբ, որն էլ կիրականացնի գործընթացը թափանցիկ և օբյեկտիվ:
- Հանձնախմբի կազմում ներգրավել Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հիմնախնդիր- Գյուղական հաստատություններում գործող ուսուցիչների գերծանրաբեռնվածությունը և մասնագիտական թերծանաբեռնվածությունը/. համապատասխան որակավորում ունեցող կադրերի պակաս

Հիմնախնդրի հիմնավորում - Հիմնախնդիրը կապված է գյուղական հաստատություններում ուսուցիչների թվաքանակի սակավության հետ և ֆինանսական բնույթ է կրում՝ կախված դպրոցների սահմանափակ բյուջեից: Սա թերևս հանդիսանում է առավել խնդրահարույց կողմը երկրի կրթական ոլորտում կադրերի առկայության խնդրի վերաբերյալ: Դրա արդյունքում դպրոցները ձեռք են բերում այնպիսի ուսուցիչներ ունենալու փորձ, որոնք դասավանդում են միաժամանակ մի քանի առարկա: Վերջին երկու տասնամյակների ընթացքում, հատկապես գյուղական դպրոցներում, աշակերտների թվի կտրուկ նվազումը հանգեցրել է դպրոցներից կադրերի արտահոսքին: Այս իրավիճակի արդյունքում գյուղական դպրոցները աստիճանաբար արձանագրում եմ կրթության որակի անկում և դպրոցների շրջանավարտները անմրցունակ են բարձրագույն և միջին–մասնագիտական հաստատություններում իրենց կրթությունը շարունակելու գործընթացներում: Իրողության այսպես կոչված «հեռանկարային արդյունքը» գյուղական բնակավայրերում աղքատության խորացումն է:

Հիմնախնդիր-Հանրակրթական հաստատությունները բավականաչափ քաղաքականացված են, որը խոչընդոտում է հաստատությունների բնականոն գործունեությանը.

Հիմնախնդրի հիմնավորում – այսօր ՀՀ-ում մենք ականատես ենք քաղաքականացված տնօրենների գործող համակարգի, ովքեր պատասխանատու են ձայներ 'հավաքելու' տվյալ կուսակցության համար: Այս գործընթացում ներառված են բոլորը՝ տնօրեններ, ուսուցիչներ, ծնողներ և աշակերտներ: Կրթության մասին օրենքը բավականին ընդհանուր է անդրադառնում քաղաքակացվածության հարցին: Այն խստորեն չի կարգավորում դպրոցներում տեղի ունեցող իրական գործընթացները: «1370 դպրոցից 1150 դպրոցի տնօրենները կուսակցության անդամ են, մեծամասամբ Հանրապետական: Համակարգը տնօրենին ստիպում է ուսուցիչների հետ միանալ «ինչ-որ» կուսակցության: Դիմադրելու դեպքում տնօրենին և ուսուցիչներին սպառնում է աշխատանքից ազատվելու հեռանկարը: Գյուղապետը հանձնարարում է դպրոցի տնօրենին կանչել ծնողներին, որ իրենց ձայնը տան ընտրություններում: Երեխաները ստիպված են լինում թվանշան ստանալու համար «համոզել» ծնողներին, որ քվեարկեն: Դպրոցների տնօրենների քաղաքական պատկանելությունը բավական մեծ խնդիր է, որը պահանջում է իրավական միջամտություն՝ դպրոցի միջավայրի բացասական ազդեցությունը կանխելու նպատակով:

Լուծման առաջարկներ

- Մշակել և կիրառության մեջ դնել իրավական փաստաթուղթ(օրենք, ենթաօրենսդրական ակտ), որը ուղղված կլինի կրթության և քաղաքական ոլորտի առանձնացմանը և ոլորտը զերծ կպահի հանրապետությունում տեղի ունեցող ցանկացած մակարդակի քաղաքական զարգացումներից:

Միջնակարգ դպրոց. Ավագ դպրոց

Հիմնախնդիր- Կրկնուսուցումը լայն տարածում է ստացել. Մեծանում է հանրության անվստահությունը դպրոցի նկատմամբ.

Հիմնախնդրի հիմնավորում -

Մեր լավագույն ուսուցիչների մի խոշոր զանգված ցածր աշխատավարձերի պատճառով հարկադրված վաստակելու այլ ճանապարհներ է փնտրել ու գտել է: Խնդիրը, այսպես կոչված, մասնավոր պարապելն է, կրկնուսուցումը, որ հիմա շատ տարածված է: Կրկնուսուցումն այսօր ամուր արմատներ է ձգել մեր հասարակության մեջ, քանի որ կրթական իրականությունը (ընդունելության քննությունների բովանդակությունը) իրականում չի համապատասխանում պետական չափորոշիչներին ու ծրագրերին, ինչո՞ւ չէ, նաև դասագրքերին: Ավելացրած նաև հասարակական մտածողությունը, անվստահությունը դպրոցի և նրա տված գիտելիքի նկատմամբ: Կրկնուսուցումը աշակերտին ոչ թե համակարգված գիտելիքներ է տալիս, այլ ընդամենը վարժեցնում է ընդունելության քննություններ հանձնելուն: Կրկնուսուցումը պահում է հազարավոր ուսուցիչների ընտանիքներ, գաղտնիք չէ, թե ինչքան «բարձր» են մեր հանրապետությունում գնահատում սերունդ կրթողներին: Հարկավոր է ընդամենը փնտրել ու գտնել մի հարցի պատասխան. ինչո՞ւ են ծնողները պատրաստ զգալի գումարներ ներդնել իրենց երեխաների ստացած հիմնական կրթությանը օժանդակելու համար: Կրկնուսուցման խնդրի առկայությամբ խախտվում է երախայի կրության և հանգստի իրավունքները, որոնք լրջագույն հետևանքներ են ունենում երեխայի հետագա կյանքի փուլերում:

Լուծման առաջարկներ.

- վերահսկել դասագրքային բիզնեսը,
- վերանայել ավագ դպրոցների կազմակերպումը և նրանց արդյունավետությունը,
- վերացնել քննությունների կազմակերպման ներկա ձևերը:

Հիմնախնդիր - Գյուղաբնակ երեխաների համար ավագ դպրոցի անհասանելիությունը

Հիմնախնդրի հիմնավորում - Կրթություն բոլորի համար 2010-2015 զեկույցում (http://unesdoc.unesco.org/images/0023/002322/232205e.pdf) նշվում է, որ ֆինանսական անհավասարությունը Հայաստանի կրթական համակարգի հիմնական խնդիրներից է: Կրթական ոլորտում սոցիալական բևեռացումը վերջին տարիներին լուրջ խնդրի է վերածվում: Որակական մեծ տարբերությունը մայրաքաղաքի և մարզերի դպրոցների միջև, մասնագետների պակասը հաճախ խոչընդոտ է դառնում մարզաբնակ երիտասարդների համար ԲՈՒՀ-երում սովորելու համար: Կրթական բարեփոխումներն էլ որոշ դեպքերում ոչ միայն չեն նպաստում սոցիալ անհավասարությունների շտկմանը, այլ ընդհակառակը՝ ավելի

են խորացնում: Այսպես, օրինակ, Հայաստանի ավագ դպրոցների 95.5 տոկոսը գործում են քաղաքային համայնքներում (109 դպրոցից՝ 7-ը): Գյուղական վայրերում հիմնականում գործում են 12-ամյա միջնակարգ դպրոցներ, Հայաստանում գործող 770 միջնակարգ դպրոցից 703-ը գտնվում են գյուղական համայնքներում, այսինքն՝ գյուղաբնակ աշակերտները զրկված են հոսքային կրթություն ստանալու հնարավորությունից: Քաղաքային ավագ դպրոցների ֆինանսավորումը կրկնակի ավել է 12 ամյա հիմնական դպրոցներից և այդ տարբերությունը պատճառաբանված է կրթության որակն ապահովելու, հոսքային կրթություն տալու հիմնավորմամբ, ինչից զրկված են գյուղաբնակները:

Գյուղական համայնքներում լուրջ խնդիր է ավագ դպրոցների հասանելիությունը: Մարզային ֆորումների մասնակիցները (մայիս,հունիս 2015) նշեցին, որ գյուղական համայնքներից ավագ դպրոց գնում են միայն այն երեխաները, որոնք քիչ թե շատ ունեն կայուն սոցիալական վիճակ և մոտ են ապրում քաղաքային համայնքներին, մինչդեռ շատ-շատերը ուղղակի զրկված են այդ հնարավորությունից:

Աղքատության ցուցանիշի ավելացումը սրում է կրթական ոլորտում սոցիալական բևեռացվածության աստիճանը: Տնային տնտեսությունների կենսամակարդակի 2010թ. հետազոտությունը փաստում է, որ ավագ դպրոցում կրթությունը չեն շարունակում հիմնականում բնակչության ամենաաղքատ խավերն ու գյուղական բնակչությունը: 2015թ Բարձրագույն կրթության սոցիալական չափայնության վերլուծության համաձայն (http://www.pl4sd.eu/images/Country_Reviews/CR_Final_Report_Armenia.pdf)
դպրոցն ավարտելուց հետո ոչ աղքատ ընտանիքներից բուհ ընդունվողների ցուցանիշը կազմում է 44 տոկոս, այնինչ, աղքատ ընտանիքներից դպրոցն ավարտելուց հետո բուհ է ընդունվում աշակերտների 25 տոկոսը, ծայրահեղ աղքատ ընտանիքներից՝ 10 տոկոսը միայն:

Թվերը փաստում են, որ գյուղական համայնքներից աշակերտների արձանագրած արդյունքները նվազման միտում ունեն, թերևս հենց քաղաքային և գյուղական համայնքների դպրոցների զարգացման անհամաչափությունն է պատճառը, որ հեղինակավոր, միջազգային ստուգատեսի՝ ԹԻՄՍՍ-ի արդյունքներով (սա միակ միջազգային ստուգատեսն է այս պահին, որին Հայաստանի աշակերտները մասնակցում են) արձանագրվել է գյուղական և քաղաքային համայնքների աշակերտների գիտելիքների բավական մեծ տարբերություն: 2012-ի տվյալներով գյուղական և քաղաքային համայնքների աշակերտների արձանագրած արդյունքներում մինչև 30 միավորի տարբերություն կար, այսինքն՝ փոքր համայնքների երեխաները վատ կրթություն են ստանում: Ի դեպ, 4-րդ դասարանում տարբերությունը փոքր է, 9-րդ դասարանից՝ բավական մեծ, ինչը փաստում է, որ համաչափ զարգացման առումով խնդիրներն առկա են: Նույնն են փաստում նաև Գնահատման և Թեստավորման կենտրոնի կողմից 2013թ. անցկացված ֆիզիկա և քիմիա առարկաներից արտաքին ընթացիկ գնահատմանարդյունքները.http://www.atc.am/files/verlucutyunner/2013noyember_yntacik_fizika_qimia.pdf. ավագ դպրոցների աշակերտների միջին միավորները նշանակալի բարձր են եղել միջնակարգ և ոչ պետական դպրոցների աշակերտների միջին միավորներից: Կրթության վրա աղքատության ազդեցության մասին են վկայում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները. ամեն տարի 9-րդ դասարանն ավարտած ավելի

քան 4000 աշակերտ չի շարունակում կրթությունը, որոնց 12 տոկոսը պատճառաբանել է, որ «կրթական ծառայությունները շատ թանկ են» և չեն կարող շարունակել:

Լուծման տարբերակ – Համայնքների խոշորացման գործընթացին զուգահեռ ներդնել **փնջային ավագ դպրոցների համակարգը** (իրար մոտ գտնվող մի քանի գյուղական համայնքներ կունենան ավագ դպրոց, որը կսպասարկի փնջի գյուղական համայնքների երեխաներին) `ապահովելով համապատասխան ֆինանսական, կադրային, նյութատեխնիկական և կազմակերպչական լուծումները:

Հիմնախնդիր- շրջանավարտները չունեն կյանքի և մասնագիտական գործունեության համար բավարար կիրառական կարողություններ ու հմտություններ.
Հիմնախնդրի հիմնավորում – ՀՀ-ում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո շրջանավարտները փորձում են իրենց ուսումը շարունակել որևէ բուհում կամ միջին-մասնագիտական հաստատությունում: Սակայն մասնագիտական կողմնորոշման ծառայության բացակայության պատճառով երեխաները հնարավորություն չեն ունենում ընտրել իրենց մտավոր և ֆիզիկական հնարավորություններին համապատասխան մասնագիտություն: Բացակայում է արդյունավետ մասնագիտական կողմնորոշման հնարավորությունը: Կրթական ծրագրերում գերակշռում է սովորողների տեսական պատրաստվածությունը: Այս հանգամանքը հետագայում ճակատագրական դեր է խաղում երիտասարդների կյանքում, քանի որ ավարտելով ուսումը, շատերը չեն կարողանում գտնել համապատասխան աշխատանք, և ժամանակի ընթացքում կորցնում են իրենց մասնագիտական հմտությունները, դառնում երկարակյաց գործազուրկ՝ շարունակական կրթության և մասնագիտական կողմնորոշման ծառայությունների բացակայության պատճառով:

Լուծման տարբերակ –

- Շահագրգիռ բոլոր կողմերի և համապատասխան կառույցների համակարգված ու փոխլրացնող գործունեության կազմակերպում (հանրակրթական դպրոց, միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններ, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ, մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն, երիտասարդների հետ տարվող աշխատանքների կառույցներ, առողջապահական հաստատություններ և այլ սոցիալական ինստիտուտներ):

Հանրակրթության թափանցկությունը և հաշվետվողականությունը

Հիմնախնդիր - Հանրակրթական հաստատություններում առկա է կոռուպցիա, դրամահավաք.

Ըստ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) արդյունքների՝ ՀՀ-ում 2013թ. կրթական համակարգը 58 տոկոսով տեղ է գտել առավել կոռումպացված ոլորտների շարքում: Հատկանշական է , որ կուռուպցիայի դեմ պայքարում ՀՀ կառավարության կազմում Կրթության և գիտության նախարարությունը առաջամարտիկ է, որը կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ծրագրեր է իրագործել

2011-2012թթ. և 2013- 2014թթ. ժամանակահատվածների համար: Դրանց արդյունքների վերաբերյալ կանոնավոր կերպով հաշվետվություն-տեղեկանքներ են հրապարակվել ԿԳՆ կայքում: Այս առումով, ԿԳՆ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման ընթացքը շատ ավելի թափանցիկ է, քան մինչ այս պահը Կառավարության հաստատած հակակոռուպցիոն ռազմավարությունների ու միջոցառումների ծրագրերի իրագործումը:

Այդուհանդերձ, այս ամենի արդյունքում կոռուպցիոն երևույթները դպրոցներում չեն պակասել, երբեմն ստացել են ավելի քողարկված և ստվերային բնույթ: Կոռուպցիայի դեմ պայքարելով՝ երևույթը թաքցվեց, դարձավ ավելի դժվար բացահայտելի:

Կոռուպցիան կարող է հաղթահարվել ոչ թե արտաքին ազդեցությամբ և պատիժների միջոցով, այլ այնպիսի պայմաններ ստեղծելով, երբ կոռուպցիան կսպառի իրեն՝ որպես նպատակներին հասնելու ոչ արդյունավետ եղանակ:

Լուծման տարբերակներ

- Կոռուպցիոն վարքագծի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորման և իրազեկվածության բարձրացում հանրակրթական հաստատություններում՝ ուսուցիչների, ծնողների և աշակերտների շրջանում:
- Հանրակրթական հաստատություններում մասնակցային մոնիթորինգի իրականացում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: